<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հնարավոր

մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք/ներ/:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-15/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Զ. Անդրանիկ 2 հասցեով, մինչև սույն թվականի փետրվարի 2- ը, ժամը 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կարինե Հովսեփյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության շենքում Զ. Անդրանիկի 2 հասցեում, 302 սենյակում, սույն թվականի փետրվարի 2-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի ձեռքբերումը:

<<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի մատակարարման /որոնք կազմված են 134 չափաբաժիններից/ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

Դեղերի փոխադրման պայմանները.

1. Դեղերը փոխադրվում են միայն տրանսպորտային փակ միջոցներով՝ հաշվի առնելով տվյալ արտադրանքի համար ՝ սահմանված գործարանային պահման պայմանները: Տրանսպորտային միջոցը պետք է ապահովված լինի դեղերի պահպանման պայմանների համար համապատասխան միջոցներով:

2. Տրանսպորտային միջոցում արտադրանքը պետք է դասավորված լինի խնամքով՝ խմբային տարաներում՝ արանքում չթողնելով դատարկ տարածքներ:

3. Ջերմաստիճանային ռեժիմի տատանումների նկատմամբ զգայուն դեղերը տեղափոխելիս պետք է ապահովել ինդիկատորով ջերմամեկուսիչ փաթեթավորում՝ մինչև բաշխման առաջնային օղակին հասնելը:

4. Դեղերի փոխադրման տարայի վրա նշվում է՝

- արտադրանքի անվանումը,
- արտադրանքի քանակը,
- խմբաքանակի համարը,
- պիտանիության ժամկետը,
- անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մակագրությունները՝

<<Չսառեցնել>>, <<Պահել 2-8$^{0}$C-ում>>, <<Շուտ փչացող արտադրանք>> և այլն:

5. Ուղարկողը նախապես պետք է տեղեկացնի բեռը ուղարկելու մասին՝ ներառյալ երթուղին, բեռի ընդհանուր քանակը և անվանումը, ժամանման պահը, անհրաժեշտության դեպքում՝ ցուցումներ <<սառցե շղթայի>> պահպանման վերաբերյալ:

6. Դեղորայքը պետք է առաքվի պատվերն ընդունելուց մեկ-երկու օրվա ընթացքում:

7. Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսեր:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված N5/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ /Հավելված 5.1/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով :

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

<<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն է mp09@mail.ru:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է

պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն Ե. Մ. Սարգսյան